**Արձանագրություն N 3**
**ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/20/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան «25» «հունիսի» 2018թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Մ. Մխիթարյան |
| Հանձնաժողովի անդամներ | Ա. Գրիգորյան<br>Մ. Համբարձումյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Լ. Սարգսյան |

***1. Հայաստանի Հանրապետության ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին***

***(Մ. Մխիթարյան)***

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ և ստացվել եզրակացություն, ըստ որի «Սմարթլայն» ՍՊԸ-ն չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին***

***(Մ. Մխիթարյան)***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել Մասնակցին ներկայացնել առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը: «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/20/1» ծածկագրով գնման ընթացակարգի պահանջներին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *3. Ընթացակարգի ամփոփման մասին*

---

***(Մ. Մխիթարյան)***

Հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

1. Որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/20/1» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 13-րդ, 14-րդ, 16-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ 23-րդ և 24-րդ չափաբաժինների մասով հաղթող ճանաչել՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ին՝ 68.750 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը, որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/20/1» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ չսահմանել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Մ. Մխիթարյան

Անդամներ՝ _____ Ա. Գրիգորյան

_____ Մ. Համբարձումյան

Քարտուղար՝ _____ Լ. Սարգսյան